ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
Կարեն Սարգսյան, Նախարարի խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները.
Ավստրիա, Զալցբուրգ, մայիսի 20-24

3. Հրավիրող կողմը.
Համաշխարհային բանկ, PEMPAL

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Ներքին աուդիտի միջազգային ստանդարտների և արհեստական բանականության թեմաներին առնչվող մարտահրավերները:
ՀՀ ֆինանսների նախարարությունում նախատեսվում է վերականգնել և կառուցվածքային փոփոխությունների հիման վրա ներդնել ներքին աուդիտի նոր համակարգ: Սույն աշխատանքների համակարգումը հանձնարարվել է ինձ և հարկավոր էր ծանոթանալ միջազգային փորձին, նորություններին, տարբեր երկրների լավագույն ու ստացված փորձին և քաղած դասերին, որպեսզի արդյունավետ եղանակով համակարգերը ներդրվեն:

5. Քննարկված թեմաները
Ներկայացվում էր Ավստրիայի փորձը թե տեխնոլոգիաների կիրառման և թե արհեստական բանականության որոշ ֆունկցիաների կիրառման մասով: Մի քանի երկրներ ներկայացնում էին նաև իրենց առնչությունը ներքին աուդիտի կազմակերպման հարցում արհեստական բանականության կիրառման տարրերով: Հրավիրված մի քանի խոսնակներ խոսեցին ժամանակակից տենդենցների և ներքին աուդիտի միջազգային ստանդարտների փոփոխությունների մասին, որոնք հարկավոր են հաշվի առնել տեղայնացման ժամանակահատվածում: Կարևոր մաս էին կազմում խմբային աշխատանքները, որտեղ քննարկվում էին գալիք հանդիպմանն առնչվող հարցադրումների ձևակերպման ու օրակարգի ձևավորման հարցերը, ինչպես նաև բոլոր այն առանձնահատկությունները, որոնք հարկավոր է հաշվի առնել հաջորդ հանդիպումը կազմակերպելու համար:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Նման միջոցառումներ նախատեսված չեն եղել:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել, միայն ձեռք է բերվել պայմանավորվածություն հաջորդ հանդիպման ժամկետների մասով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
Առաջարկությունն այն է, որ հարկավոր է ներքին աուդիտի համակարգը ներդնելու հարցում ի սկզբանե կիրառել որոշ տարրեր արհեստական բանականության գործիքակազմի, որոնք կօգնեն առավել արդյունավետ աշխատել մեծ տվյալների հետ և կայացնել ճշգրիտ որոշումներ:
Այդ աշխատանքները կատարելու համար հարկավոր է ուսումնասիրել գործող մի քանի համակարգերը, որոնք ներկայացվեցին հանդիպման ժամանակ, վեց ամվսա ընթացքում փորձել ընտրել մեկ տարբերակն ու կատարել փորձարկումները, որի պատասխանատուն կլինի ներքին աուդիտի նոր բաժնի պետը, իսկ արդյունքում կունենանք գործող տվյալների հավաքագրման և վերլուծման մի համակարգ, որը կօգնի կայացնել արդյունավետ որոշումներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN KAREN 2611780209

30.05.2024